


# Ադամյան փողոցի նախագիծ

Քաղաքի զարգացման նոր հայեցակարգը՝ գլխավոր հատակագծի նոր խմբագրությունը, առաջարկում է գոտիավորման և հողօգտագործման այնպիսի մոտեցում, որը թույլ է տալիս քաղաքը վերակառուցել որոշակի ճառագայթների շուրջ: Այդ ճառագայթներից է Շուշիի Ադամյան փողոցը, որի վերակառուցումը թույլ կտա արդեն իսկ կարճաժամկետում Շուշին գրավիչ դարձնել թե՛ զբոսաշրջիկների և այցելուների, թե՛ ներդրողների և վերաբնակիչների համար:



Ադամյան փողոցը, որը գտնվում է քաղաքի հեռանկարային՝ Ջրասաշրջության, առողջարանային և համագումարների թաղամասում, Հիմնադրամի ճարտարապետների կողմից նախագծվել է որպես հետիոտն բազմաֆունկցիոնալ գոտի: 120մ երկարությամբ այս փողոցը, ունենալու է հետևյալ գործառույթները՝ հանգստյան/առողջարանային, հյուրանոց/հյուրատուն, առևտուր, հանրային սնունդ, ցուցահանդեսներ, ակումբներ, բացօթյա ցուցասրահ, արևելյան բաղնիք և բնակելի տարածքներ: